«ԵՊՀ» հիմնադրամի ստորաբաժանումների կողմից
ապրանքներ, աշխատանքներ կամ ծառայություններ ձեռք բերելու (գնումներ կատարելու) կարգ

1. **Հայտատուն** (ստորաբաժանման, նախագծի կամ թեմայի ղեկավարը, նվիրատվության հասցեատերը) իրեն անհրաժեշտ ապրանքներ, ծառայություններ, աշխատանքներ (**գնման առարկա**) ձեռք բերելու նպատակով **զեկուցագիր** է ներկայացնում ԵՊՀ ընդհանուր հարցերի գծով **պրոռեկտոր Ա.Գ. Մալխասյանին**::
2. Հաստատված **զեկուցագիրը** հայտատուն **փոխանցում է Գնումների պլանավորման վարչություն**: Վերջինս տվյալ գնման առարկան **գրանցում է ԵՊՀ գնումների պլանում**, հինգ աշխատանքային օրվա ընթացքում կազմում է **հրաման**, որով **հայտատուն**, տվյալ գնման գծով, **նշանակվում է պատասխանատու ստորաբաժանման անդամ**:
3. Հայտատուն կազմում է **հայտ** ըստ Գնումների պլանավորման վարչության կողմից **տրամադրած ձևի և հերթական համարի**: ՀՀ **«Գնումների մասին» օրենքի** պահանջներից ելնելով **գնումը կատարվում** է կա՛մ **հայտատուի կողմից, կա՛մ հայտարարվում է մրցույթ**: Եթե Օրենքով հնարավոր է գնումը կատարել հայտատուի կողմից, ապա Գնումների պլանավորման վարչությունը տրամադրում է **գնի առաջարկի, պայմանագրի, հանձնման-ընդունման արձանագրության** և **եզրակացության** ձևերը:
4. Հայտատուն իր կողմից կազմած հայտի մեջ նշված մատակարարից ստանում է **գնի առաջարկ**՝ ըստ ձևի և **պայմանագիր** (եթե գնման առարկայի մատակարարումը մեկանգամյա չէ):
5. **Հայտատուն հետևում** է պայմանագրի կատարմանը, ընդունում է **գնման առարկան**: Մատակարարից ստանում է ըստ ձևի կազմված **հանձնման-ընդունման արձանագրություն** (մատակարարի և իր կողմից ստորագրված) և **կազմում է եզրակացություն** այն մասին, որ մատակարարված գնման առարկան, համապատասխանում է իր պահանջած որակին ու քանակին: **Ստորագրում** է այն:
6. **Ձեռք բերված գնման առարկայի արժեքը** մատակարարին **փոխանցելու համար** հայտատուն վերը նշված բոլոր փաստաթղթերը (ներառյալ պայմանագիրը) **փոխանցում է Գնումների պլանավորման վարչությանը**:
7. Գնումների պլանավորման վարչությունը իր մակագրությամբ փաստաթղթերը փոխանցում է հաշվապահություն: Հաշվապահությունը կատարում է փոխանցումը:

Փաստաթղթերից որևէ մեկի կամ նախատեսված գումարի բացակայության դեպքում փոխանցում չի կատարվում:

Եթե Օրենքը պահանջում է, որ գնումը իրականացվի մրցույթով, ապա հայտատուն իր կողմից լրացված **հայտը** փոխանցում է Գնումների պլանավորման վարչությանը, որպեսզի այն կազմակերպի մրցույթ:

Գնումների վարչությունը հայտը (ըստ հերթական համարակալման) **գրանցում է իր գնման գործընթացների** կազմակերպման **ժամանակացույցի մեջ** և կազմակերպում է մրցույթ: **Կախված այն բանից, թե** (գնման առարկայի գնով և բնութագրերով պայմանավորված) **ՀՀ գնումների ընթացակարգերից որ տարբերակն է ընտրվում՝ մրցույթը կարող է տևել 21-66 օր:**

ԵՊՀ Գնումների պլանավորման
վարչության պետ Գ.Մ. Ալեքսանյան,
25.11.2019թ.